ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ-2

ՀՀ արդարադատության նախարարության կարիքների համար գնումների eauction.armeps.am համակարգի միջոցով գրասենյակային կահույքի ձեռքբերման նպատակով ձևավորված «ՀՀԱՆ-ԷԱՃԱՊՁԲ-23/28» ծածկագրով էլեկտրոնային աճուրդի ընթացակարգի գնահատող հանձնաժողովի նիստի

Գնահատող հանձնաժողովի նիստը տեղի ունեցավ 11.05.2023թ. ժամը 14-30-ին, ՀՀ արդարադատության նախարարության վարչական շենքում, ք. Երևան, Վ.Սարգսյան 3/8 հասցեում:

Նիստին մասնակցում էին՝
գնահատող հանձնաժողովի նախագահ՝ Վահագն Ասատրյանը,
գնահատող հանձնաժողովի անդամներ՝ Հրաչ Արևշատյանը, Արթուր Հայրապետյանը,
քարտուղար՝ Մարինե Մուրադյանը:

Օրակարգ

<u>Աճուրդի արդյունքների անփոփում և գնահատում</u>

1. Աճուրդի մասնակիցների անվանումները և գտնվելու վայրի հասցեները

«ՀՀԱՆ-ԷԱՃԱՊՁԲ-23/28» ծածկագրով էլեկտրոնային աճուրդին մասնակցել է հետևյալ կազմակերպությունը.

1. «Լեվան» ՍՊԸ (Արմավիր, Մեքենագործների փողոց 1-ին շենք բն.8)

2. Տվյալներ հայտում պահանջվող փաստաթղթերի առկայության մասին

2.1. Առաջին տեղ զբաղեցրած մասնակիցների կողմից ներկայացված հայտերում առկա են հրավերով պահանջվող փաստաթղթերը:

3. Տվյալներ մասնակցի ներկայացրած փաստաթղթերի՝ սահմանված պայմաններին համապատասխան կազմված լինելու մասին

3.1 Առաջին տեղ զբաղեցրած մասնակցի՝ «Լեվան» ՍՊԸ-ի, կողմից համակարգ ներմուծված էլեկտրոնային աճուրդին մասնակցելու *դիմում-հայտարարությունը չի համապատասխանում հրավերի պահանջներին,* մասնավորապես՝ 1-ին կետում «և իրեն փոխկապակցված անձինք» բառերը բացակայում են, իրական շահառուների վերաբերյալ հայտարարագիրը և տեխնիկական բնութագիրը բավարարում է հրավերի պահանջներին:

4. Հակադարձ աճուրդի արդյունքում մասնակիցների առաջարկած գները և նախահաշվային գինը

չափաբաժնի համարը	Ապրանքի անվանումը						
1	*բազկաթոռներ*						
Չափաբաժնի համար	Զբաղեցրած տեղ	Ներկայացված հայտեր	Նախահաշվային գին	Վերջին առաջարկ			Մասնակցի կարգավիճակ
				Արժեք	ԱԱՀ	Գին	
1	1	Լեվան ՍՊԸ	450000 AMD	375000 AMD	20 %	450000.00 AMD	-

5. Տեղեկություններ հայտերի վերաբերյալ կատարված հարցումների մասին

5.1 Հայտերի վերաբերյալ կատարված հարցումներ և պատասխաններ չեն եղել:

5.2 ՀՀ կառավարության 04.05.2017թ. թիվ 526-ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի (այսուհետ՝ Կարգի) 32-րդ կետի 25-րդ ենթակետի հիման վրա հիմնավորումներ չեն ներկայացվել:

Հանձնաժողովը որոշեց՝

1. Հիմք ընդունելով Կարգի 41-րդ կետը՝ նիստը կասեցնել մեկ աշխատանքային օրով: Հաջորդ նիստը հրավիրել 2023թ. մայիսի 15-ին, ժամը 10:00-ին, ՀՀ արդարադատության նախարարության վարչական շենքում, ք. Երևան, Վ.Սարգսյան 3/8 հասցեում:

Քարտուղարին՝

Eauction.armeps.am համակարգի միջոցով այսօր տեղեկացնել «Լեվան» ՍՊԸ-ին, անհամապատասխանությունների վերաբերյալ և առաջարկել մեկ աշխատանքային օրվա ընթացքում շտկել դրանք:

Ընդունվել է որոշում՝ կողմ 3, դեմ 0:

Հանձնաժողովի նախագահ _____ Վահագն Ասատրյան

Հանձնաժողովի անդամներ՝ _____ Հրաչ Արևշատյան

_____ Արթուր Հայրապետյան

Հանձնաժողովի քարտուղար՝ _____ Մարինե Մուրադյան

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ-3

ՀՀ արդարադատության նախարարության կարիքների համար գնումների eauction.armeps.am համակարգի միջոցով գրասենյակային կահույքի ձեռքբերման նպատակով ձևավորված «ՀՀԱՆ-ԷԱՃԱՊՁԲ-23/28» ծածկագրով էլեկտրոնային աճուրդի ընթացակարգի գնահատող հանձնաժողովի նիստի

Գնահատող հանձնաժողովի նիստը տեղի ունեցավ 15.05.2023թ. ժամը 10-00-ին, ՀՀ արդարադատության նախարարության վարչական շենքում, ք. Երևան, Վ.Սարգսյան 3/8 հասցեում:

Նիստին մասնակցում էին՝
գնահատող հանձնաժողովի նախագահ՝ Վահագն Ասատրյանը,
գնահատող հանձնաժողովի անդամներ՝ Հրաչ Արևշատյանը, Արթուր Հայրապետյանը,
քարտուղար՝ Մարինե Մուրադյանը:

1. Անհամապատասխանությունը շտկելու վերաբերյալ

«Լեվան» ՍՊԸ-ի կողմից սահմանված ժամկետում շտկվել է անհամապատասխանությունները:

Գնահատող հանձնաժողովը, ներկայացրեց իր կողմից իրականացված հայտերի գնահատման արդյունքները՝ eauction.armeps.am համակարգի միջոցով, որի հիման վրա որոշեց՝

1. Հակադարձ աճուրդի արդյունքում ընթացակարգի՝ 1 չափաբաժնի համար «Լեվան» ՍՊԸ-ի, հայտերը գնահատել բավարար և ճանաչել ընտրված մասնակից:
2. ''Գնումների մասին'' ՀՀ օրենքի 10-րդ հոդվածի համաձայն՝ անգործության ժամկետ չի կիրառվում:

Ընդունվել է որոշում՝ կողմ 3, դեմ 0:

Հանձնաժողովի նախագահ _____ Վահագն Ասատրյան

Հանձնաժողովի անդամներ՝ _____ Հրաչ Արևշատյան

_____ Արթուր Հայրապետյան

Հանձնաժողովի քարտուղար՝ _____ Մարինե Մուրադյան